ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ.

I ԵՊԱՏԱԿ։

1. Միութեան նպատակն է՝
Ա. Հոգալ քահանաների մտաւոր զարգացումը ընդլայնելու մասին.
Բ. Բարելաւել անդամ քահանաների տնտեսական դրութիւնը.
Գ. Հոգալ անդամ քահանաների այրիների տնտեսական կարիքները և որբերի ուսման գործը հնարաւոր չափով.
Դ. Նպաստել զառամեալ և պաշտօնին անկարող անդամ քահանաներին՝ բացի 6, 7, 8, յօդ. յիշած նպաստից.
Ե. Օգնել անդամներին՝ հարկաւոր դէպքում կողմնակի պաշտօն գտնելու.
Զ. Պաշտպանել և բարւոքել անդամների իրաւական դրութիւնը.
Է. Կազմել փոխատու խնայողական դրամարկղ աստանձին կանոնադրութեամբ.
Ը. Կազմակերպել քահանայական պատուի միջնորդ դատարան քահանաների միմեանց կամ ժողովրդեան հետ ունեցած անարդար վարմունքները ու թիւրիմացութիւնները յառաջացած դէպքերում։

II ՄԻՋՈՑՆԵՐ.

2. Քահանաների մտաւոր զարգացումը ընդլայնելու համար միութիւնը կարող է ունենալ զրադարան – ընթերցարան, պարբերական դասախօսութիւններ կազմակերպել, հարկաւոր դէպքերում հրաւիրելով նաև այլ զիտակ և մասնագէտ մարդկանց։
3. Միութեան նիւթական աղբիւրներն են՝
Ա. Անդամավճարներ.
Բ. Տոկոսները և եկամուտները միութեան գումարներից.
Գ. Նուիրաբերութիւններ.
Դ. Կողմնակի արդիւնք՝
1. Զարաթ երեկոների գերեզմանօրհնէքի արդիւնք.
2. Կամաւոր տուրքեր քահանաների օրինակատարութիւնների ժամանակ և կտակաւանդներից.
3. Քաղաքիս ննջեցեալոց համար գերեզմաններ պատրաստելու վարձ.
4. Միութեան դրամները (ընթացիկ ծախսերը զուրս եկած) մնում են դրամատան մէջ անձեռնմխելի իր կազմակերպուելու ժամանակից մինչև երեք տարին լրանալը։
5. Երեք տարին լրանալուց յետոյ, ընդհանուր ժողովը սահմանում է խնայողական դրամարկղի կանոններ միութեան զանձարանից անդամ քահանաների փոխարինաբար տոկոսով օգտուելու մասին։
6. Միութեան կազմակերպուելուց հինգ տարի յետոյ բոլոր դրամագլխի միմիայն տոկոսները ամեն տարի շարունակ բաժանւում են միութեան անդամ քահանաների մէջ. իսկ „միջոցներ" վերնագրի տակ յօդ. 3. ընդհանուր եկամուտները աւելանում են դրամագլխի վրայ մինչև տասն տարի լրանալը։
7. Տասն տարուց յետոյ, արդէն զումարուած պատրաստի դրամագլուխը մշտապէս մընում է դրամատան մէջ և գործադրւում 5 յօդ. յիշած նպատակի համաձայն, իսկ տասն և մէկ-երրորդ տարուց սկսած նոյն „միջոցներ" վերնագրի տակ յօդ. 3 տարեկան բոլոր եկամուտի և ստացուած տոկոսների մի տասներորդ ($^1/_{10}$) մասը աւելանում է դրամագլխի վրայ. իսկ մնացած $^9/_{10}$ երրորդ մասը ամեն տարի բաժանւում միութեան անդամների մէջ։
8. Միութիւնը կարող է տաս տարուց յետոյ դրամագլխից մի որոշ գումար վերցնել և գործ դնել որ և է օգտաբար գործի և կամ արժէքներ գնելու համար, և նրանից ստացած օգուտը յատկացնել համաձայն 7 յօդուածի, իսկ եթէ ձեռնարկած գործը վնաս բերէ, այն ժամանակ անդամները լրացնում են վնասուած գումարը իրանց հասանելի 7 յօդ. յիշուած եկամուտի գումարից։
9. Մայր գումարը 7 և 8 յօդուածներում յիշատակուած յաւելեալ գումարով մնում է անձեռնմխելի՝ քանի որ դոյութիւն կունենայ քահանաների միութիւնը։

14357

10 Միութեան անդամ կարող են լինել միայն Երևանի այն քահանաները, որոնք հաստատուն ծուխ ունին քաղաքի եկեղեցիներում։

11. Իւրաքանչիւր անդամ ամեն ամսի 1-10 վճարում է երկու ռուբլի անդամավճար. հակառակ դէպքում ամեն մի անցած ամսի համար վճարում է միութեան գանձարանի օգտին ամեն մի մանէթին մի կոպէկ տոկոս. իսկ եթէ նա մինչև վեցերորդ ամսի վերջը լրիւ չի վճարի բոլոր անդամավճարները, այնուհետև նա զրկւում է միութեան անդամութիւնից և իր հասանելի ամբողջ գումարը մնում է միութեան գանձարանի օգտին. և չունի իրաւունք իր նախկին անդամավճարների, եկամուտների և արտօնութիւնների մասին վէճ յարուցանելու. այլ նա եթէ ցանկանայ, կարող է նոր անդամ դրուել համաձայն 16, 4, 5, 6, 7, 8 յօդուածների։

12. Պատուաւոր նուիրատու անդամ կոչւում են այն անձինք, որոնք հինգ տարի շարունակ նուիրում են միութեան գանձարանին տարեկան ոչ պակաս տասն (10) ռ. և կամ միանուագ յիսուն (50) մանէթ։

13. Անդամներից որևէ մէկը երբոր կամենայ դուրս գալ միութիւնից, իսպառ զրկւում է իրեն հասանելի ամբողջ բաժնից և իր վճարած բոլոր անդամավճարից. այդպիսին եթէ նորից ցանկանայ անդամ լինել, ընդունւում է համաձայն 16, 4, 5, 6, 7, 8 յօդուածների։

14. Երևանից ժամանակաւորապէս բացակայող անդամ քահանան, չի զրկւում իր անդամակցական իրաւունքից՝ եթէ նա շարունակում է իր անդամավճարը համաձայն 11 յօդուած. իսկ եթէ նա հոգևոր բարձր իշխանութեան կարգադրութիւնով մշտապէս տեղափոխւում է ուրիշ քաղաք կամ գիւղ քահանայագործելու, այն ժամանակ նա ստանում է միութեան դրամակղից իրեն հասանելի բաժինը ամբողջապէս։

15. Վախճանւող անդամ քահանայի այրին կամ որբերը իրենց հասանելի բաժինը կարող են միանուագ ստանալ, բայց հանգուցեալ անդամ քահանան եթէ չունի կին և ոչ տանը մնացած որբեր, այդ դէպքում հանգուցեալի բաժինը մնում է միութեան դրամարկղի օգտին. իսկ եթէ մնում է միայն այրիացած կինը, այն ժամանակ նա ստանում է միութեան գանձարանից հասանելի բաժնի միայն կէս մասը, երբ էլ որ ցանկանայ։

16. Միութեան մէջ մտնող Երևանի քահանան առանձին խնդիրքով դիմում է ժողովի նախագահին իրեն անդամ ընդունելու ընդհանուր ժողովի որոշմամբ, որի մասնակցութիւնը միութեան մէջ հաշւում է մտած օրից. իսկ նպաստ ստանալու համար սպասում է նա այնքան ժամանակ, որքան սպասել են հիմնադիր անդամները համաձայն 4, 5, 6, 7, 8 յօդուածների։

17. Ընդհանուր ժողովի որոշմամբ և թոյլատուութեամբ անդամ քահանան ամենակարևոր դէպքերում (բացի 5 յօդ.) կարող է որոշած տաս տարին անցնելուց յետոյ, միութեան գանձարանից տոկոսով դրամ վերցնել իր բաժնի կէսից ոչ աւելի· պարտաւորուելով հատուցանել այն իր տարեկան հասանելի բաժնից ընդհանուր ժողովի որոշած ժամանակի ընթացքում։

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

18. Միութեան ընդհանուր ժողովները լինում են Ցունվար, Մայիս և Սեպտեմբեր ամիսներում, իսկ կարևոր դէպքերում նաև արտակարգ ժողովներ։

19. Ընդհանուր ժողով նշանակում է նախագահը նաև վերաստուգող յանձնաժողովի և կամ անդամների $^1/_4$-ի գրաւոր պահանջով։

20. Ընդհանուր ժողովի խորհրդածութեան նիւթերը ժողովից հինգ օր առաջ նախագահը գրաւոր յայտնում է բոլոր անդամներին։

21. Ամէն մի անդամ ձայնի հաւասար իրաւունք ունի ժողովի ժամանակ. ձայների հաւասարութեան դէպքում գերակշռութիւնը նախագահի կողմն է։

22. Ժողովից բացակայող անդամը չէ կարող իր ձայնը յանձնել ժողովում ներկայ եղող անդամին,

23. Ժողից բացակայ գտնուող անդամը եթէ ստորագրել է հրաւիրաթերթին, պարտաւոր է ժողովը կայանալուց առաջ յայտնել ժողովի նախագահին իր բացակայութեան պատճառը։

24 Ընդհանուր ժողովը կանոնաւոր է համարում եթէ ներկայ են անդամների $^2/_3$ մասը։

25. Երկրորդ ընդհանուր ժողով հրաւիրում է եօթ օրից յետոյ, բայց չի կարող կայացած համարուել եթէ ներկայ անդամների թիւը միութեան բոլոր անդամների կիսից պակաս է։

26. Հարկաւոր համարուած ժամանակ, ընդհանուր ժողովի համաձայնութեամբ նախագահի հրաւիրով ներկայ են լինում ընդհանուր ժողովներին նաև «պատուաւոր» կոչուած անդամները կամ կողմնակի ձեռնհաս խորհրդատու անձինք։

27. Ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրում է իր համար նախագահ, փոխ-նախագահ և քարտուղար մի տարի ժամանակով։

28. Ընդհանուր ժողոդը ամբողջ միութեան տէր ու տնօրէն լինելով. նրա մօտաւոր գործունէութիւնն են.

Ա.—Վարչութեան ներկայացրած տարեկան հաշիւների քննութիւնը.

Բ.—Վարչութեան անդամների և նրա գործունէութիւնը վերաստուգող մասնաժողովի ընտրութիւնը.

Գ.—Վարչութեան կամ որ և է անդամի զեկուցումների քննութիւնը.

Դ.—Միութեան անդամների կամ վարչութեան մէջ ծագած տարաձայնութիւնների, օրինազանցութիւնների և բողոքների քննութիւնը և օրինազանց պաշտօնեաների հեռացնելը. (*)

Ե.—Միութեան կանոնագրութիւնը փոփոխելու հարցի քննութիւնը.

Զ.—Միութեան փակման խնդրի քննութիւնը։ (**)

V. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

29. Վարչութիւնը ընդհանուր ժողովի գործադիր մարմինն է և իր արածի համար պատասխանատու է ընդհանուր ժողովի առաջ։

30. Վարչութեան անդամները թուով չորս տղի ընտրւում են ընդհանուր ժողովից մի տարի ժամանակով գաղտնի քուէարկութեամբ։

Վարչութիւնը իւրաքանչիւր ամսավերջում զննում է միութեան անդամների մօտ գտնուած դրամական կտրոնները, տետրակները, մատեանները, և առհասարակ դրամական հաշուի վերաբերեալ բոլոր գործերը և թղթերը և ստանում է վարչութեան գանձապահի միջոցով անդամների հաւաքած բոլոր նուիրադրամները; եթէ որև է անդամ ամսավերջում չի ներկայացնի իր մօտ գտնուած դրամական հաշիւը, այնուհետև նա երկրորդ ամսուայ համար վճարում է միութեան գանձարանին ամեն մի չվճարած մանէթին մի կոպէկ տոկոս. իսկ եթէ նա ամբողջ երկու ամսուայ ընթացքում լրիւ չի վճարի իր մօտ գտնուած դրամական բոլոր հաշիւները, այն ժամանակ նա համաձայն 11 յօդուածի զրկւում է միութեան անդամութիւնից եւ նրա հասանելի մասը մնում է գանձարանի օգտին և կրկին անդամ լինելու համար օգտւում է կանոնագրութեանս 4, 5, 6, 7, 8, 16 յօդուածներով։

32. Թէ անդամավճարները և թէ այլ եկամուտները ստացւում են վարչութեան գանձապահ անդամի ձեռքով, որը ստացած դրամների համար տալիս է անդորրագրեր։

33. Վարչութեան որ և է անդամի հիւանդութեան կամ քաղաքից առնուազն մի ամսեայ բացակայութեան դէպքում, եթէ կարիք կայ խորհրդակցութեան կամ վարչական ժողով գումարելու, վարչութիւնը լրացնում է իր պակաս անդամի թիւը՝ հրաւիրելով միութեան անդամներից մէկին։

Ծանօթութիւն.

(*)—Ընդհանուր ժողովի վճռին չենթարկուող օրինազանց անդամը զգուշութեան է հրաւիրւում ժողովի կողմից կամ նկատողութեան է ենթարկւում, կամ զրկւում է ժողովներում ձայնի իրաւունքից որոշ ժամանակով և կամ զրկւում է մեկ տարուայ իրեն հասանելի եկամուտի որոշ մասից կամ ամբողջից՝ յատկացնելով այն միութեան գանձարանի օգտին. իսկ ծայրայեղ դէպքում ժողովը իրաւունք ունի նրան հեռացնելու միութեան անդամութիւնից և յատկացնել նրա բաժինը զարձեալ միութեան գանձարանին. բայց եթէ օրինազանց անդամը կրկին ցանկանայ միութեան անդամ համարուել, պէտք է առաջնորդուի կանոնագրութեանս 4, 5, 6, 7, 8, 16 յօդ. համաձայն։ (**) Որոշուած փոփոխութիւնները զօրութիւն են ստանում Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութիւնից յետոյ։

34. Վարչութիւնը միութեան բոլոր գումարները յանձնում է Պետական կամ մասնաւոր ապահով բանկերին որոշ ժամանակով կամ ընթացիկ հաշուով իր մօտ պահելով յիսուն (50) մանէթից ոչ աւելի ընթացիկ ծախսերի համար։

35. Վարչութիւնը ընդհանուր ժողովի պատուէրով իւրաքանչիւր տարուայ վերջը ներկայացնում է ընդհանուր ժողովին միութեան գործերի տարեկան հաշիւը։

36. Միութիւնն ունի առանձին կնիք, կենդրոնում խաչ, իսկ շուրջը հետևեալ մակագրութիւնը. «Երևանի հայ քահանաների միութիւն»։

VI. ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

37. Ընդհանուր ժողովը տարեկան երկու անգամ գաղտնի քուէարկութեամբ ընտրում է վերաստուգող մասնաժողով երկու անդամից բաղկացած, որոնց պարտաւորութիւնն է քննել վարչութեան բոլոր գործերը և զեկուցանել ժողովին։

38. Վերաստուգող մասնաժողովի անդամները չեն կարող վարչութեան անդամներից լինել։

VII. ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

39. Միութիւնը փակելու դէպքում անհրաժեշտ է միութեան բոլոր անդամների $^3/_4$ մասի համաձայնութիւնը։

40 Եթէ որ և է պատճառով միութիւնը դադարեցնէ իր գոյութիւնը, միութեան ամբողջ սեպհականութեան գործադրութիւնը տնօրինում է ընդհանուր ժողովը իր ցանկութեան համաձայն։

41. Այս կանոնադրութիւնը հաստատում է ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ապա թէ մտնում է օրինական գործադրութեան մէջ։

Ըստ կոնդակի Վեհափառ Հայրապետի ապրիս թ. 468 թոյլատրի գործադրել այս կանոնադրութիւն ի 17-էն Մարտի։ Դիւանապետ՝ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեան 1907—17 մարտի։

Տ. Կ.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014814